

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-ԱՎ-19/1.1**

ք. Երևան

« 21 » 02 2019թ.

ՀՀ քննչական կոմիտեն, ի դեմս դեպարտամենտի ղեկավար Ա.Նիկոյանի, որը գործում է դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Լալայանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատուց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **1000000 (մեկ միլիոն)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (գրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (գրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (գրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են

պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՑՅԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱԿԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ

ՀՀ քննչական կոմիտե

ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական

վարչություն,

Հ/Հ 900011000834

ՀՎՀՀ 02631263



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ

ք. Երևան, Ռուփինյանց փ. 31

«Արարատբանկ»ԲԲԸ

Հ/Հ 1510012745550100

ՀՎՀՀ 00873228

Էլ. հասցեն՝ info@flashmotors.am

հեռ. (044)200 220



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափանմուշի հոդ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						ժամկետը	հասցեն
1	50111130/1	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	դրամ	1000000	1	20.12.2019թ	ք. Երևան, Ռուֆինյանց փ. 31

Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ

Հ/Հ	SU-1, SU-2 Ծառայությունների և SU-2-ի ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Միավորի գին /ՀՀ դրամ/
		1 չափաբաժին
		ՎԱՋ 21074, ՎԱՋ 2106 մակնիշի ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայություններ
1	2	3
	<i>SU-1 ներառվող ծառայությունների անվանում</i>	
1	Բռնկման համակարգի ստուգում	0
2	Սառեցման համակարգի ստուգում	0
3	Յուղման համակարգի ստուգում	0
4	Արտացման համակարգի ստուգում	0
5	Կցորդման համակարգի ստուգում	0
6	ՓՏ-ի աշխատանքի ստուգում	0
7	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	
8	Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում	0
9	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	0
10	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	0
11	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	0
12	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	0
13	ABS համակարգի ստուգում	
14	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	0
15	Դեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	0
16	Թափքի վիճակի ստուգում	0
17	Տարբեր ազդեցատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	0
18	Շարժիչի հանում և տեղադրում	35000
19	Նույնը DOHC (2 բաշխիչ լիսեռ) դեպքում	
20	Նույնը կոնդիցիոների դեպքում	

21	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	
22	Շարժիչի վերանորոգում	100000
23	Նույնը DOHC դեպքում	
24	Նույնը V6-ի դեպքում	
25	Շարժիչի բարձրիկի հանում և տեղադրում	6000
26	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	0
27	Նույնը աջի համար (V6)	
28	Նույնը ձախի համար (V6)	
29	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	0
30	Նույնը աջի համար (V6)	
31	Նույնը ձախի համար (V6)	
32	Շարժիչի գլխիկի միջադիրմների փոխարինում	5000
33	Շարժիչի գլխիկի վերանորոգում	5000
34	Փակամիխի խցուկի փոխարինում	5000
35	Նույնը V6-ի դեպքում	
36	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում	0
37	Նույնը V6-ի ձախի դեպքում	
38	Նույնը V6-ի աջի դեպքում	
39	Նույնը DOHC դեպքում	0
40	Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում	
41	Հրիչների փոխարինում SOHC	3000
42	Նույնը DOHC դեպքում	0
43	Ատամնավոր փոկի փոխարինում	0
44	Նույնը DOHC դեպքում	0
45	Նույնը V6-ի դեպքում	
46	Ծնկածև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	0
47	Նույնը կոնդիցիոների դեպքում	
48	Նույնը DOHC դեպքում	
49	Նույնը կոնդիցիոների դեպքում	
50	Նույնը V6-ի դեպքում	
51	Նույնը կոնդիցիոների դեպքում	
52	Ծնկածև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	0
53	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	
54	Մխոցային օդակների փոխարինում	0
55	Նույնը DOHC դեպքում	0
56	Նույնը V6-ի դեպքում	
57	Թափանիվի հանում և տեղադրում	5000
	2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ	
58	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	3000
59	Յուղի պոմպի փոխարինում	0
60	Նույնը DOHC դեպքում	
61	Նույնը V6-ի դեպքում	
62	Ղեկավարման բլոկի վերանորոգում	5000
63	Բռնկման կարգավորում	2000
64	CO կարգավորում	2000
65	խարճարակի հանում և տեղադրում	3000
66	խարճարակի վերանորոգում	4000
67	Օդի զտիչի փոխարինում	0
68	Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում	0
69	Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում	4000
70	Բենզամղիչի փոխարինում	3000
71	Վառելիքի զտիչի փոխարինում	2000
72	Վառելիքի բաքի հանում և տեղադրում	1000
73	Տրամյորի հանում և տեղադրում	3000

74	Տրամյորի վերանորոգում	0
	3. Առեցման և արտածման համակարգ	
75	Հովհարի փոկի հանում և տեղադրում	3000
76	Հովհարի հանում և տեղադրում	0
77	Ռադիատորի հանում և տեղադրում	8000
78	Նույնը կոնդիցիոների դեպքում	0
79	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	
80	Ռադիատորի վերանորոգում	5000
81	Թերմոստատի փոխարինում	5000
82	Ջրի պոմպի փոխարինում	5000
83	Նույնը DOHC և V-6 դեպքում	
84	Նույնը կոնդիցիոների դեպքում	
85	Ջրի պոմպի վերանորոգում	0
86	Նույնը DOHC դեպքում	0
87	Նույնը կոնդիցիոների դեպքում	0
88	Ընդարձակող բաքի փոխարինում	0
89	Խլարարի հանում և տեղադրում	0
90	Նույնը DOHC դեպքում	0
91	Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում	0
	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ	
92	Բանվ. կամ գլխ. գլանի հանում և տեղադրում	0
93	Բանվ. կամ գլխ. գլանի վերանորոգում	0
94	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	5000
95	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում	0
96	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում	
97	ՓՏ-ի հանում և տեղադրում	20000
98	ՓՏ-ի վերանորոգում	60000
99	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	0
100	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում	0
101	Վազքաչափի շարժաբեռի փոխարինում	0
102	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում	
103	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	
104	Նույնը V6-ի համար	
105	ԱՓՏ-ի հանում և տեղադրում	
106	Նույնը V6-ի համար	
107	ԱՓՏ-ի վերանորոգում	
108	Նույնը V6-ի համար	
109	ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում	
	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ	
110	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում	
111	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում վերանորոգումով	
112	Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում	
113	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում	10000
114	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում, վերանորոգ.	0
115	Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում	5000
116	Կարդանային լիսեռի միջ. կախցի հանում և տեղադրում	5000
	6. Առջևի և հետևի կամրջակներ	
117	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում	0
118	Առջևի կամ հետևի կամրջ. լիկատար քանդում և հավաքում	0
119	Առջևի կամ հետևի կամրջ. մասնակի քանդում և հավաքում	0
120	Առջևի կամ հետևի կամրջ. կիսաստճու հանում և տեղադր.	0
121	Կիսաստճու առանցքակալի փոխարինում	5000

7. Կախոց		
122	Առջևի կախոցի լիակատար քանդում և հավաքում	0
123	Տրավերսի հանում և տեղադրում	15000
124	Ձախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում	
125	Անվակունդի առանցքակալի փոխարինում	4000
126	Նույնը հետին տանող ա/մ-երի համար	0
127	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	
128	Նույնը հետին տանող ա/մ-երի համար	
129	Ձախ կամ աջ հողակապի խցուկների փոխարինում	
130	Ձախ կամ աջ հողակապի առանցքակալների փոխարինում	0
131	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	2000
132	Զսպանակի հանում և տեղադրում	0
133	Զսպակի հանում և տեղադրում	
134	Զսպակի վռանների փոխարինում	
135	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	5000
136	Ներքևի լծակի հանում և տեղադրում	0
137	Ներքևի լծակի վռանների փոխարինում	0
138	Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում	3000
139	Միջին ձգանի հանում և տեղադրում	0
140	ճոճանակային լծակի հանում և տեղադրում	0
141	Վերևի լծակի հանում և տեղադրում	0
142	Վերևի լծակի վռանների փոխարինում	2000
143	Գնդե հողակապերի փոխարինում	3000
144	Ծայրակների հանում և տեղադրում	0
145	Առջևի կայունարարի հանում և տեղադրում	0
146	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	2000
147	Առջևի կայունարարի առջևի վռանների փոխարինում	0
148	Հետևի զսպանակի փոխարինում	0
149	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	5000
150	Հետևի ձգածողի հանում և տեղադրում	0
151	Հետևի երկաթածողի հանում և տեղադրում	0
152	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում	2000
153	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում	
154	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում	
155	Անվաբացքի կարագավորում	5000
156	Զոդման աշխատանքներ 1 քառ.սմ համար	0
8. Ղեկային մեխանիզմ		
157	Ղեկային կալունի հանում և տեղադրում	15000
158	Նույնը V6-ի համար	
159	Ղեկային կալունի վերանորոգում	15000
160	ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանների փոխարինում	0
161	ՂԿ-ի հողակապերի հանում և տեղադրում	0
162	Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում	
163	Նույնը DOHC դեպքում	
164	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում	
165	Նույնը DOHC դեպքում	
166	Հիդրոուժեղարարի փողրակի հանում և տեղադրում	
167	Նույնը DOHC դեպքում	
168	Նույնը կոնդիցիոների դեպքում	
169	ՀՈԻ ՂԿ-ի հանում և տեղադրում	
170	ՀՈԻ ՂԿ-ի վերանորոգում	
9. Արգելակային համակարգ		
171	Գլխ. գլանի հանում և տեղադրում	5000

172	Գլխ. գլանի վերանորոգում	5000
173	Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում	5000
174	Բանվ. գլանի հանում և տեղադրում	5000
175	Բանվ. գլանի վերանորոգում	5000
176	Արգելակային համակարգի օդահանում	5000
177	Առջևի սուլպորտի հանում և տեղադրում	5000
178	Հետևի սուլպորտի հանում և տեղադրում	
179	Առջևի սուլպորտի վերանորոգում	5000
180	Հետևի սուլպորտի վերանորոգում	
181	Արգելակային փողակի փոխարինում	5000
182	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	5000
183	Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում	
184	Հետևի կոճղակների փոխարինում	4000
185	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	4000
186	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում	4000
187	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում	0
188	ABS-ի հանում և տեղադրում	
189	ABS-ի վերանորոգում	
190	Չեռքի արգելակի ճուպանի հանում և տեղադրում	0
191	Չեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում	3000
	10. Էլեկտրասարքավորում	
192	Էլեկտրասարքավորման վերանորոգում	5000
193	Չափիչ սարքերի հանում և տեղադրում	2000
194	Գններատորի հանում և տեղադրում	6000
195	Նույնը V6-ի դեպքում	
196	Նույնը հիդրոուժեղարարի դեպքում	0
197	Գններատորի վերանորոգում	6000
198	Սեկնարկիչի հանում և տեղադրում	
199	Սեկնարկիչի վերանորոգում	6000
200	Առջևի լապտերի հանում և տեղադրում	0
201	Հետևի լապտերի հանում և տեղադրում	0
202	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	3000
203	Վազքաշափի հանում և տեղադրում	0
204	Վազքաշափի ճուպանի հանում և տեղադրում	0
205	Սաքերի պանելի հանում և տեղադրում	15000
206	Արագաշափի հանում և տեղադրում	0
207	Ազդանշանի հանում և տեղադրում	0
208	Ապակեվացիչի շարժիչի հանում և տեղադրում	2000
209	Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում	0
210	Ազդանշանային համակարգի տեղադրում	0
211	Մագնիստլայի տեղադրում	0
212	Վառոցքային լարերի հանում և տեղադրում	3000
213	Էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում	3000
214	Էլ/հաղորդալարերի հիմն. խտրցի հանում և տեղադրում	1000
215	Էլ/հաղորդալարերի երկրորդ. խտրցի հանում և տեղադրում	1000
216	Էլեկտրական տվիչների փոխարինում	1000
217	Էլեկտրական անջատիչների փոխարինում	1000
218	Վառոցքի մոմերի փոխարինում	1500
219	Կոնդիցիոների լիցքավորում	0
220	Կոնդիցիոների վերանորոգում	0
	11. Այլ ծառայություններ	
221	Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում գին 1 քառ.դմ - ի համար	2000
222	Ավտոմեքենայի լվացում	2000

223	Անիվի հանում և տեղադրում	1000
224	Անվադողի վերանորոգում	0
225	Անիվի բայանսավորում	1000
226	Անիվի վալց	0
227	ՇՕ-զողման աշխատանքներ, <i>գին 1 քառ.սմ - ի համար</i>	5000
228	Խառատային աշխատանքներ	5000
229	Փականագործի աշխատանքներ	5000
230	Քարշարկի ծառայություն <i>գին 1կմ, համար</i>	1500
	Ընդամենը ծառայություններ	560000
	ՏՄ-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	ՎԱՀ 21074, ՎԱՀ 2106 մակնիշի ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայություններ
	1.Շարժիչ	
1,1	Շարժիչի բլոկ	0
2,1	Շարժիչի գլխիկ	0
3,1	Բարձիկ	10000
4,1	Շարժիչի գլխիկի միջադիր	5000
5,1	Շարժիչի վերանորոգման կոմպլեկտ	0
6,1	Շարժիչի բաշխիչ լիսեռ	0
7,1	Շարժիչի փական դուրս մղող	3000
8,1	Շարժիչի փական ներս մղող	3000
9,1	Շարժիչի փականի խցուկ	3000
10,1	Ծնկաձև լիսեռ	0
11,1	Ծնկաձև լիսեռի խցուկ առջևի	3000
12,1	Ծնկաձև լիսեռի խցուկ հետևի	3000
13,1	Ծնկաձև լիսեռի արմատական ներդիրներ	5000
14,1	Ծնկաձև լիսեռի շարժաթևային ներդիրներ	5000
15,1	Չեմակային տափողակ	0
16,1	Մխոց	1000
17,1	Մխոցային օղակներ	10000
18,1	Ատամնանիվ	0
19,1	Ատամնավոր փոկ	0
20,1	Շղթա	10000
21,1	Չիդրոնձգան	3000
22,1	Չրիչ	3000
23,1	Չիդրոհրիչ	3000
24,1	Բաշմակ	3000
25,1	Չանգստարար	3000
26,1	Թափանիվ	3000
27,1	Թափանիվի պսակ	0
28,1	Խցուկ բաշխիչ լիսեռի	0
29,1	Շկիվ	3000
30,1	Շարժաթև	0
31,1	Կարտերի միջադիր	0
32,1	Միջադիր	5000
	2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ	
33,1	Յուղ շարժիչի հանքային, <i>1 լիտր</i>	3000
34,1	Յուղ շարժիչի կիսասինթետիկ, <i>1 լիտր</i>	4500
35,1	Յուղ շարժիչի սինթետիկ, <i>1 լիտր</i>	5500
36,1	Յուղի զտիչ	2000
37,1	Յուղի պոմպ	0
38,1	Յուղի պոմպի շարժաթեր	0
39,1	Յուղի ռադիատոր	0

40,1	Յուղի փողրակ	0
41,1	Յուղի ծորակ	0
42,1	Վառոցքի մոմ	3000
43,1	Բենզոլբաք	0
44,1	Խառնարակ	6000
45,1	Խառնարակի վերանորոգման հավաքածու	0
46,1	Ինժեկտորի ֆորսունկա	0
47,1	Վառելանյութի մղիչ էլեկտրական	8000
48,1	Վառելանյութի մղիչ մեխանիկական	4000
49,1	Վառելանյութի գտիչ	2000
50,1	Վառելանյութի գտիչ նուրբ մաքրման	0
51,1	Վառելանյութի փողրակ	2000
52,1	Աքսելերատորի ծոպան	0
53,1	Օդի գտիչ	1000
54,1	Զերմաստիճանային տվիչ	0
55,1	Յուղի տվիչ	0
56,1	Բաշխիչ լիսեռի տվիչ	0
57,1	Օդի ծախսի տվիչ	0
58,1	Արագաչափի տվիչ	0
59,1	Հովհարի տվիչ	0
60,1	Ջրի տվիչ	0
61,1	Բենզոլբաքի տվիչ	0
62,1	Սարման ընթացքի կարգավորիչ	0
63,1	Սարման ընթացքի տվիչ	0
64,1	Ղեկավարման համակարգիչ	0
65,1	Պարապ ընթացքի տվիչ	0
66,1	Դրոսելային փականի տվիչ	0
67,1	Թթվածնի տվիչ	0
	3. Սառեցման և արտածման համակարգ	
68,1	Հովհարի փոկ	0
69,1	Հովհար	0
70,1	Ռադիատոր	30000
71,1	Ընդարձակող բաք	0
72,1	Ռադիատորի փողրակ	1000
73,1	Թերմոստատ	5000
74,1	Ջրի պոմպ	10000
75,1	Ջրի պոմպի առանցքակալ	0
76,1	Ջրի պոմպի թևակ	0
77,1	Սառեցման հեղուկ	5000
78,1	Ջրի պոմպի սնմանիվ	0
79,1	Հոլովակ	2000
80,1	Փոկ	5000
81,1	Փոկ կոնդիցիոների	0
82,1	Ծորակ	0
83,1	Խլարարի ներդիր	0
84,1	Խլարարի կախոց	0
85,1	Կրոնշտեյն	0
86,1	Անուր (խամուտ)	500
87,1	Խլարար	0
88,1	Ռեզոնատոր	0
89,1	Վառարանի ռադիատոր	10000
	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ	
90,1	Կցորդման բանվորական գլան	15000
91,1	Կցորդման գլխավոր գլան	0

92,1	Կցորդման գլանի վերանորոգման հավաքածու		5000
93,1	Կցորդման տանող սկավառակ		15000
94,1	Կցորդման տարվող սկավառակ		15000
95,1	Կցորդման առանցքակալ		10000
96,1	Կցորդման փողրակ		1000
97,1	Փոխանցման տուփ		50000
98,1	ՓՏ-ի առջևի խցուկ		5000
99,1	ՓՏ-ի հետևի խցուկ		5000
100	ՓՏ-ի առանցքակալ		0
101	ՓՏ-ի առաջնային լիսեռ		5000
102	ՓՏ-ի միջանկյալ լիսեռ		5000
103	ՓՏ-ի եղանիկ		5000
104	ՓՏ-ի ատամնանիվ		5000
105	Համաժամիչ		5000
106	Մուֆտ		5000
107	ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ		0
108	ԱՓՏ-ի գտիչ		
109	ԱՓՏ-ի սկավառակների հավաքածու		
110	ԱՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ		
111	Տրանսմիսսիոն յուղ, լիտր	1	6000
112	ԱՓՏ յուղ, լիտր	1	
113	ՓՏ-ի առաջնային լիսեռ		10000
114	Հերմետիկ		5000
	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ		
115	Բաշխիչ տուփ		0
116	Բաշխիչ տուփի խցուկ		0
117	Բաշխիչ տուփի առանցքակալ		0
118	Բաշխիչ տուփի ատամնանիվ		0
119	Բաշխիչ տուփի լիսեռ		0
120	Կարդանային լիսեռ		0
121	Էլաստիկ մուֆտ		0
122	Կարդանային լիսեռի միջանկյալ հեռակ		0
123	Կարդանային լիսեռի խաչուկ		5000
	6. Առջևի և հետևի կամրջակներ		
124	Հետևի կամ առջևի կամրջակ		0
125	Ռեդուկտոր		0
126	Գլխավոր փոխանցման ատամնանիվների կոմպլեկտ		0
127	Դիֆֆերենցիալ		0
128	Դիֆֆերենցիալի սատելլիտ		0
129	Տանող ատամնանիվի խցուկ		0
130	Տանող ատամնանիվի առանցքակալ		0
131	Դիֆֆերենցիալի առանցքակալ		0
132	Կիսասունի		0
133	Կիսասունու առանցքակալ		0
134	Կիսասունու միջադիր		0
135	Կիսասունու խցուկ		0
136	Կարգավորիչ տափողակ		0
	7. Կախոց		
137	Տրավերս		0
138	Կրոնշտեյն		0
139	Չախ կամ աջ հողակապ		
140	Չախ կամ աջ հողակապի փոշեթիկնոց		
141	Անվակուռ		

142	Անվակունդի խցուկ	
143	Անվակունդի ներքին առանցքակալ	5000
144	Անվակունդի արտաքին առանցքակալ	0
145	Հետևի անվակունդի ներքին առանցքակալ	
146	Հետևի անվակունդի արտաքին առանցքակալ	
147	Ձախ կամ աջ հողակապի խցուկ	
148	Հարվածամեղմիչի թասակ	3000
149	Զսպանակ	0
150	Առջևի հարվածամեղմիչ	18000
151	Հարվածամեղմիչի փոշեթիկնոց	0
152	Հարվածամեղմիչի վռան	2000
153	Ներքևի լծակ	0
154	Ներքևի լծակի վռան	3000
155	Վերևի լծակ	0
156	Վերևի լծակի վռան	2000
157	Գնդե հողակապ	3000
158	Առջևի կայունարար	0
159	Առջևի կայունարարի վռան	2000
160	Առջևի կայունարարի առջևի վռան	2000
161	Հետևի զսպանակ	0
162	Հետևի ցնցամեղմիչ	18000
163	Հետևի մետաղաձող (շտանգա)	0
164	Հետևի մետաղաձողի (շտանգա) վռան	0
165	Հետևի անկյունագծային լծակ	0
166	Անկյունագծային լծակի վռան	3000
167	Զսպակ (ռեսսորա)	0
168	Զսպակի վռան	0
169	Զսպակի միջադիր	0
170	Զսպակի բռնիչ	0
171	Աջ կամ ձախ ձգան	4000
172	Ծայրակալ	3000
173	Ձգան մեջտեղի	0
174	Անվահեծ	0
	8. Ղեկային մեխանիզմ	
175	Ղեկային կալուն	30000
176	Ղեկային կալունի առանցքակալ	1000
177	Ղեկային կալունի խաչուկ	5000
178	Հիդրոուժեղարար	
179	Հիդրոուժեղարարի փոկ	
180	Հիդրոուժեղարարի վերանորոգման կոմպլեկտ	
181	Հիդրոուժեղարարի պոմպ	
182	Հիդրոուժեղարարի պոմպի վերանորոգման կոմպլեկտ	
183	Ղեկային ձող	15000
184	Ղեկային ձողի ծայրակալ	0
185	Հիդրոուժեղարարի յուղ, <i>1 լիտր</i>	
186	Ճոճանակ	2000
187	Ճոճանակի վռան	1000
	7. Արգելակային համակարգ	
188	Գլխ. գլան	15000
189	Գլխ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	0
190	Վակուումային ուժեղարար	15000
191	Բանվ. գլան	0
192	Բանվ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	0
193	Արգելակային փողրակ	2000

194	Սուպպորտի ուղղորդիչ	3000
195	Սուպպորտի ճանճետ	2000
196	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	10000
197	Ջետևի սկավառակային կոճղակների կոմպլեկտ	
198	Ջետևի թմբուկային կոճղակների կոմպլեկտ	10000
199	Առջևի արգելակային սկավառակ	15000
200	Ջետևի արգելակային սկավառակ	15000
201	Չեռքի արգելակի ճուպան	0
202	ABS-ի տվիչ	0
203	Արգելակային հեղուկ, DOT-3 - 800գրամ	2000
204	Արգելակային հեղուկ, DOT-4 - 800գրամ	0
205	Չեռքի արգելակի ճուպան	0
9. Էլեկտրասարքավորում		
206	Գեներատոր	25000
207	Գեներատորի դիողային կամրջակ	6000
208	Գեներատորի ռելե	8000
209	Գեներատորի առանցքակալ	3000
210	Ստարտեր	25000
211	Ստարտերի ռելե	8000
212	Ստարտերի ածուխ	5000
213	Բեմդեքս	8000
214	Ստարտերի կցորդիչ (ավտոմատ)	5000
215	Առջևի լապտեր	1000
216	Առջևի թարթիչ	1000
217	Ջետևի լապտեր	1000
218	Ջետևի թարթիչ	1000
219	Արգելակային լապտեր	1000
220	Լամպ	1000
221	Էլեկտրական անջատիչ	1000
222	Էլեկտրական տվիչ	1000
223	Էլեկտրական չափիչ սարք	1000
224	Բռնկման կողպեք	1000
225	Էլեկտրալարերի գլխավոր խուրց	1000
226	Էլեկտրալարերի երկրորդային խուրց	1000
227	Վառոցքային լարերի խուրց	8000
228	Վառոցքի մոմի ծայրակալ	0
229	Վազքաչափ	0
230	Վազքաչափի ճուպան	0
231	Արագաչափ	0
232	Ազդանշան	5000
233	Ապակեվկացիչ	5000
234	Ապակեվկացիչի շարժիչ	1000
235	Դռների կենտրոնական փական	1000
236	Ազդանշանային համակարգ	5000
237	Սագնիտուլա	1000
238	Էլեկտրաամբարձիչ	1000
239	Էլեկտրաամբարձիչի շարժիչ	1000
240	Ներկ, լուծիչ, օժանդակ նյութեր <i>գին 1դ/մ վերանորոգման համար</i>	2000
Ընդամենը պահեստամասեր, քայուղեր, և այլ օժանդակ նյութեր		719500
Ընդհամենը ըստ չափաբաժնի		1 279 500

- Ընդհանուր սպասարկվելու է 5 ավտոմեքենա:
- Ծառայությունը մատուցվում է Պատվիրատուի կողմից ներկայացվող պահանջի հիման վրա՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում:
- Երաշխիքային ժամկետ է սահմանվում՝ Պահեստամասերի համար -12 ամիս , Ռետինե դետալների համար-6 ամիս:
- Անհրաժեշտության դեպքում ավտոմեքենայի նորոգումը պատվիրատուի պահանջով պետք է իրականացվի պատվիրատուի նշված վայրում:
- Պահեստամասերը պետք է լինեն նոր և չօգտագործված:

Կատարողը պետք է ունենա.

1. Մեկ վայրում առնվազն 4 ամբարձիչների վրա միաժամանակ աշխատելու հնարավորություն, անվաբացքի և զուգամիտվածքի կարգավորման ստենդ:
2. Անվադողերի նորոգման և հավասարակշռման ստենդ:
3. Կահավորված լինի անհրաժեշտ սարքավորումներով և ավտոմեքենաների էլեկտրական համակարգի ախտորոշման և թերությունների վերացման համար տեխնիկական ծրագրերով:
4. Ապահովել լիարժեք ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայությունը:
5. Դեֆորմացված թափքի ուղղման ստենդ, զողման անհրաժեշտ սարքավորումներ, ներկման և չորացման խցիկ:

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ

ՀՀ քննչական կոմիտե
 ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական
 վարչություն,
 Հ/Հ 900011000834
 ՀՎՀՀ 02631263



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ
 ք. Երևան, Ռուբինյանց փ. 31
 «Արարատքանկ»ԲԲԸ
 Հ/Հ 1510012745550100
 ՀՎՀՀ 00873228
 էլ. հասցեն՝ info@flashmorots.am
 հեռ. (044)200 220



ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

		Ծառայության											ՀՀ դրամ		
հրավերի նախատեսված ծախսափաթեթի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագրի ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50111130/1	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ		69000	69000	309000	309000	309000	571500	571500	571500	1000000	1000000	1000000	1000000

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ քննչական կոմիտե
 ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական
 վարչություն,
 Հ/Հ 900011000834
 ՀՎՀՀ 02631263



Կ Ա Տ Ա Ր ՈՂ

«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ
 ք. Երևան, Ռուբինյանց փ. 31
 «Արարատրանկ»ԲԲԸ
 Հ/Հ 1510012745550100
 ՀՎՀՀ 00873228
 էլ. հասցեն՝ info@flashmorots.am
 հեռ. (044)200 220



Պայմանագրի կողմ

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ
« » « » 20 թ. դուրս գրված N ____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն
արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Մատուցված ծառայությունների				Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամկացույցի/
			բանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն